

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ՕԴՈՍՈՍ

ԹԻԻ 3834

ՈՍՏԱՆԴՆՈ ՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 9 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂ. ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՔԵՐԾԱՆԻԱ

Գերմանիոյ նախարարապետին ալեան եւ երկնքէ քաղաքականութիւնն, ըստ երեւոյթին, այլ եւս չունի նախկին յարգն, որ աստուածացման հասած էր: Պ. Կատկով իւր թերթի անցեալ համարներէն միոյն մէջ այս առթիւ հրատարակեց հոչակաւոր յօդուած մ'որ իւր մեծագոյն կարեւորութեան պատճառաւ կը գրաւէ Ներսիսի ուղը: Նա յառաջագրեալ փաստերով ցոյց կուտայ թէ Պիզմարք իշխանն իւր մեծութիւնը կը պարտի Ռուսիոյ եւ ի նկատ առնելով այս պարագայ, խստիւ կը պախարակէ ընթացքն Ռուսիոյ, որ չափէն աւելի կարեւորութիւն կ'ընծայէ Պիզմարքեան դաշնակցութեան. ապա դժգոհութիւն կը յայտնէ երեք նախարարներու խորհրդակցութեան ի Գէսինկէն:

«Ճիշդ չը գիտենք, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը կարեւոր կը համարէ Գէսինկէն երթալ խորհրդակցութեան, — քիչ էր մնացած ըսէինք երթալ երկրպագելու Գերմանական կայսրութեան ցասուցեալ նախարարապետին: (Եւ արդարեւ մեր այս ուղեւորութիւններն Պիզմարք իշխանի մօտ կը նմանին հնադարեան ոսկեգեղմի ուղեւորութեանց): Զը գիտենք նմանապէս ի՞նչ բանակցութիւններ կը լինին կամ կը կարծուին լինիլ:»

Ապա լրագիրն սկեպտորար կը խօսի Գերմանիոյ նախարարապետի մեծամեծ ծառայութեանց համար ստացած փառաց, եւ Գերմանիոյ աներեւոյթ ամենակարողութեան վրայ:

«Գերմանիոյ նախարարապետն սոյն փառաց հետ չահած է եւ տեսակ մը խորհրդաւոր նշանակութիւն:»

«Նորա մատը կը կարծուի լինիլ մեր ժամանակի բոլոր դէպքերու մէջ: Նա տէր կը համարուի յուսուածին որոյ առաջ կը կործանին ամեն պատուարներ եւ կը բացուին ամեն բերդեր ու դղեակներ: Առանց նորա թոյլտուութեան կարելի չէ ո՛չ պառկիլ, ո՛չ ելնել, նա կը դարձնէ ամբողջ աշխարհը . . .»

«Սակայն ճշմարիտ է այս: Մեր հաւատքը չէ՞ որ կ'ստեղծէ այս հրաշքներն: Կամ, աւելի ճիշդն ըսելով, մեր նախապաշարունակ չէ՞ որ այսքան զօրաւոր կը ցուցնէ այդ ոյժն: Եւ արդ քանի որ խօսքը գերմանո-ռուսական բարեկամութեան վերայ է, ըսենք այստեղ թէ այդ բարեկամութիւնն եթէ անհրաժեշտութիւն մ'է Ռուսիոյ համար, արդեօք և ամեն ինչ չէ՞ Գերմանիոյ համար:»

Կատկով ապա խորհուրդ կուտայ Աւրտրիոյ արտաքին գործոց նախարար Պ. Բալնորի որ ի նկատ առնու թէ Գերմանիա յոյսով մեծամեծ շահեր ունեցաւ Ռուսիոյ բարեկամութենէն, եւ ապա կը յարէ թէ Աւստրիա եթէ մեծամեծ վնասներ ունեցաւ անցեալի մէջ, պատճառն այն է որ չը գիտցաւ օգուտ քաղել Ռուսիոյ բարեկամութենէն:

«Միթէ, յիրաւի, Բրուսիա լոկ իւր յոյժերուն կը պարտի այն յաջողութիւններն

զոր ունեցաւ նա վերջին քառորդ դարու մէջ եւ անկէ առաջ: Մ/թէ, վերժապէս, նոյն իսկ Գերմանիոյ կայսրութեան հաստատութիւնն ինքն/րեհ եղաւ, եւ միթէ նորա արդի առաջնակարգ դիրքն Եւրոպիոյ մէջ, նորա առ երեւոյթ ամենակարողութիւնն և գործերն զոր կ'ստեղծէ այդ Տէրութեան գլուխը կեցող այլաբանական անձնաւորութիւնն, միթէ այս ամենը չե՞ն շնորհիւ Ռուսիոյ բարեկամութեան:

Կատկով կը յարէ թէ եթէ Գերմանիա յաղթեց Ֆրանսայի, իւր ոյժերու գերազանցութեամբ չ'էր, այլ միայն շնորհիւ այն պարագայի որ Բրուսիա ապահովեալ էր Աւստրիոյ դէմ Ռուսիոյ կողմէ: Աւասիկ նորա խօսքերը.

«Քալնդրի կոմսն ամենէն աւելի լաւ պէտք է գիտնար թէ ինչու 1870 ին Ֆրանսա այնպէս չարաչար յաղթուեցաւ, Նաբոլէոն Գ. սխալեցաւ իւր հաշիւներու մէջ, սխալեցաւ որովհետեւ ի նկատ առած չ'էր զՌուսիա: Նա պատերազմի սկսաւ կատարելապէս հաւատացած լինելով թէ իրեն հետ միասին պիտի լինի Աւստրիա, իսկ Աւստրիոյ ալ հետ՝ ամբողջ հարաւային Գերմանիա: Այնքան վստահ էր ասոր որ հարկ չը համարեց լուրջ պատրաստութիւններ տեսնել: Նա մինչեւ անգամ հարկ եղած կերպիւ չը կեդրոնացուց իւր անձնական զորքերը, պատերազմի հրատարակման ժամանակ: Աւստրիոյ պետական մարդիկը պարտին լաւ գիտնալ թէ Նաբոլէոնի վերոյիշեալ վստահութիւնն անհիմն չ'էր: Իսկ եթէ նա խաբուեցաւ, պատճառը միմիայն այն էր որ ի նկատ առած չ'էր անհրաժեշտ հայտնաբերել Գերմանիա: Նա կը պատրաստուէր պատերազմական արշաւանք մ'ընել ի Պերլին եւ պատերազմի սկսաւ առանց հարկ եղած պատրաստութեանց, մինչդեռ Բրուսիա ապահովուած Ռուսիոյ կողմէ ընդդէմ Աւստրիոյ, պատերազմի պատրաստուեցաւ, ամեն ինչ աչքի առաջ առնելով, եւ իւր համախմբեալ ոյժով յարձակեցաւ անապաւն հակառակորդի վրայ, յանկարծակիի բերելով զայն: Անուրանալի է թէ Պիզմարք իշխանը ճարպիկութեամբ գործ տեսաւ, թէ Մոլթքէ կոմսն ճարտար ռազմագէտ մը հանդիսացաւ, թէ շնորհիւ նոցա ամեն ինչ լաւապէս հաշուած եւ պատրաս-

տուած էր յառաջագոյն: Սակայն եթէ այդ հաշիւներն իրականացան, կարելի դարձան, այս պարագային թէ՛ Բրուսիա, թէ՛ Պիզմարք իշխանն և թէ՛ Մոլթքէ կոմսն կը պարտին Ռուսիոյ բարեկամութեան, որ թոյլ չը տուաւ Աւստրիոյ տեղէն չարժիլ և այսու պահպանեց միացեալ Գերմանիան բրուսիական դրօշակի ներքեւ: Նոյն իսկ այժմ եթէ Ռուսիա վերահաստատէ իւր գործողութեանց ազատութիւնն, այսինքն եթէ նա դադրի Նեցուլէ դէր կատարելէ, այն ժամանակ իսկոյն եւ եթէ կը չըքանայ Գերմանիոյ ամենակարողութեան ցնորական երեւոյթն. նա — Գերմանիա — պիտի գըրաւէ իւր տեղը միւս պետութեանց շարքին մէջ:»

Պ. Կատկով, այսպէս, ամենակարողաբէան յատկութիւնն առնելով սեւ արծաթի վզէն կը կախէ զայն սպիտակ արծաթի վզին: Բնականաբար, այսպիսի ճառարածային յատկութիւն մը Ռուսական պետութեան վերագրել յետոյ, Պ. Կատկով ստորնութիւն և անպատուութիւն կը համարէ ամենազօր Ռուսիոյ համար որ դաշնակից միտուելու ետեւէ իյնայ, որու հետ կ'ուզէ լինի:

«Անքնական պարագայ մ'է որ մեծագորտէրութիւն մը, որպէս է Ռուսիա, բարեկամութեան կամ դաշնակցութեան երեւոյթի ներքեւ, ընդ միշտ կամ մինչեւ անգամ ընդ երկար ինչ հպարտի հոյս օտարի կամաց: Ի՞նչ պէտք է սեղ այդ դաշնակցութիւններն, այդ մեքանիզմներն:

«Խօսք կար թէ մենք դաշնակցութիւն պիտի հաստատենք Գերմանիոյ հետ և նորա միջոցաւ, անպատճառ նորա միջոցաւ, Աւստրո-Հունգարիոյ հետ, որպէս զի, այդ դաշնակցութեան շնորհիւ, ապահովենք եւրոպական խաղաղութիւնն, իբր թէ պիտի ապահովենք: Սակայն ի՞նչ հարկ մեզ ապահովելու եւրոպական խաղաղութիւնը: Ի՞նչ, միթէ մենք եւրոպական խաղաղութեան առնադէպներն ենք, միթէ նորա երկրապահ զինուորներն ենք: Բայց արդէն ի՞նչ կը նշանակէ եւրոպական խաղաղութիւն: Արբաւէ մեզ եթէ կարող լինինք ապահովել Ռուսիոյ խաղաղութիւնն իւր շահերու չըքանակի մէջ: Տակաւին առաջ, երբ թիւրիմացութիւններ կային մեր եւ Գերմանիոյ միջեւ, խաղաղասիրական դաշնա-

կցութիւն մը կազմելու գրոյց կար, եւ Գերմանիոյ քաղաքականութեան հրաշագործը, ժամանակ մը, այդ սրբազան դաշնակցութեան կողմնակիցներ կը ժողովէր միշտ, եւ իւր թերթի միջոցաւ կը ծանուցանէր աշխարհի թէ եւրոպական այս կամ այն տէրութիւնն յարած է այն դաշնակցութեան։ Երբ մնացած էր Ֆրանսան ալ այդ կարգին մէջ դասէր։ Արդ յայտարարէր թէ ամբողջ Եւրոպա խաղաղասիրական մեծ դաշնակցութեան մը փոխառած է։ Ռուսիա միայն դուրս ձգուած էր մէջէն, եւ արդէն զնա ցանցի մէջ ձգելու նպատակաւ Գերմանիոյ նախարարապետն յղացած էր այսպիսի դաշնակցութիւն մը։ Եւ երբ նախարարաց բարեկամական բացատրութենէն յետոյ համաձայնութիւն գոյացաւ Ռուսիոյ կողմէ եւս յիշեալ երեւակայական «Եւրոպական խաղաղութեան» պահպանման համար, այն ժամանակ իսկոյն եւ եթէ չբացաւ ընդհանրական դաշնակցութիւն կազմելու գաղափարը։ Նորա մէջ կը մտնէին եւ Խաղիս, Սպանիա, Թուրքիա եւ եւ։ Մեծ դաշնակցութիւնը չբացաւ և մնաց միայն Ռուսիա։ Յանուն եւրոպական խաղաղութեան պահպանման նա պարտաւոր էր կատարելու իւր պարտաւորութիւններն, խնամ տանելով Գերմանիոյ ապահովութեան, խաղաղութեան եւ մեծութեան։ Յանուն եւրոպական միաբանութեան պահպանման, նա պարտաւոր էր ինքզինքն դնել Պերլինի քաղաքականութեան լիակատար տրամադրութեան ներքեւ։ Մեր սանձն իւր ձեռքն առնելով Գերմանիա նորէն երեսան եկաւ որպէս ամենակարող և ամեն ինչ լուծող պետութիւն մը։ Պիղմարը իշխանն Ժաքոն-Բեռն շնորհիւ յաջողեցաւ մին միւսի ետեւէն կարգի դնել իւր շահեկան գործերը, իսկ մեզ ալ մեծ հարգելութեամբ դասարանեցին Պալատեան լեւրակները։ Յենլով Ռուսիոյ, նա դիւրութեամբ կը կարողանար երկիւղ ազդել այն ամենուն որ կը խորհէր հակառակիլ իւր քաղաքականութեան։ Միւս կողմէ Ռուսիա պէտք էր երկիւղ ազդել երբեմն բաղխմամբ մը Անգլիոյ հետ, երբեմն եւրոպական դաշնակցութեամբ այն պարագային երբ ռուսական քաղաքականութիւնը թոյլատրէ իրեն գործելու Պերլինեան հրամանատարութենէն դուրս։

Սոյն տողերով Մանիֆէստը պատմութիւնը կը յայտարարէ թէ Ռուսիա հակառակ իւր մեծ զօրութեան անկախ տէրութիւն մը չէ, այլ կը գործէ Գերմանիոյ հրամանատարութեան ներքեւ։ Կատկովի այս յայտարարութիւնն ազգային ծանր անպատուութիւն մ'է Ռուս ժողովրդի եւ մանաւանդ ռուսական պետութեան համար, որ հանրային աշխարհավարական խնդրոց մէջ կ'ուզէ եւ կը ջանայ ամենազղեցիկ դեր մը խաղալ։ Պէտք չէ մոռնալ թէ այս խօսքերն անսահման նշանակութիւն ունին։ Պ. Կատկով ահագին տղեկցութիւն ունի կայսեր անձնաւորութեան վրայ հետեւաբար եւ Ռուսիոյ քաղաքականութեան ուղղութեան վրայ։

Լրագիրը կը յայտնէ թէ անկարելի է թողուլ զՌուսիա այս կացութեան մէջ։ «Իրեն անյատուկ, անպատուաբեր կացութեան մէջ գտնուելով Ռուսիա կրնայ միայն վնասել իրեն եւ այլոց։ Ամեն մի սըրխալ կացութիւն անշուշտ վնասաբեր հետեւութիւններ յառաջ կը բերէ։ Մենք անհամբար տեսնուի շատ կարող ենք նպաստել հանրային խաղաղութեան ապահովութեան ելել մեր քաղաքականութեան, մեր աշխարհավարութեան մեջ անխախտ լինինք, ինչպէս որ ելել մեր սեփական խելով։ Օտար տէրութեանց հետ մեր ունեցած յարաբերութիւններու մէջ ներմուծելով արդարութիւն, կ'սթափենք ոմանք եւ ուրիշներն ալ կը հանգստացնենք։ Մենք այնուհետեւ ընդունակ կը դառնանք լինելու չէ՛ թէ ստրուկներ այլ ճշմարիտ բարեկամներ մեր բարեկամաց։ Միայն շնորհիւ անկախութեան, որ անհրաժեշտ է կառավարութեան մը սրտէս օղը կենդանի էակի, մենք կարող ենք որոշել թշնամիները բարեկամներէն եւ դէպքերու հոսանքի մէջ, փոխանակեալ հանդամանքներու միջեւ նախախնամութեան կամօք տեսնենք ո՛ւմ հետ պիտի պարտաւորինք չափուիլ...»։

Բայց ճշմարիտ դաշնակցներ ունենալու կարելիութիւնը լիազորը չը մերժեր։

«Ար բաւէ դատարկ վերացականութեամբ վարել մեր քաղաքականութիւնը... Նա կարող է լինիլ մեր ճշմարիտ բարեկամն որոյ դէպքերու ընթացքը սերտ կապակցութիւն ունի մեր հայրենեաց կենսական եւ էական շահերու հետ, կ'ուզէ թող լինի

Միացեալ Նահանգաց նախագահն, կամ
Չնաստանի կայսրը, Պէտր չ'ունի՞ք քան-
նելու թէ « Դասաւորներն որ վանդակի մէջ
կը զետեղեն այս կամ այն տէրութիւնը » :
Մեզ միայն պէտք է գիտնալ մեր հայրե-
նիքի շահերն ու ուղղել մեր գործերն . . . » :
Ասկէ կարելի է եզրակացնել որ լրագիրը
կարելի կը համարէ ճշգրէ՞ Բարեկէ՞ներ բնո-
րել հանրապետական պետութեանց մէջէն
խակ : Նա կը պարզէ այս հետեւեալ խոս-
քերով .

« Մենք հաւատարմեան որ մեր խօսքե-
րու մէջ կ'ուզեն տեսնել ակնարկութիւն
Փրանքո - ուսական դաշնակցութեան նը-
կատմամբ, սակայն մենք վճռողաբար կը
բողոքենք այդպիսի մեկնութեան դէմ : Մենք
կ'ուզենք Ռուսիա ազատ բայց եւ բարեկա-
մական յարաբերութեան մէջ դաշնակի Գեր-
մանիոյ հետ, կ'ուզենք որ նմանօրինակ յա-
րաբերութիւն ունենայ եւ միւս տէրու-
թեանց հետ, նմանապէս եւ Ֆրանսայի՝ որ
օրէ ց'որ աւելի եւ աւելի պատշաճաւոր
գիրք կը գրաւէ Եւրոպայի մէջ : Իսկապէս
ինչո՞ւ պիտի գժտուինք նորա հետ եւ մեր
ի՞նչ պէտքն է նորա ներքին գործերուն
խառնուիլն : Իւրաքանչիւր երկիր, մանա-
ւանդ Ֆրանսա որ այնքան նշանաւոր է,
ունի իւր գործերն, իւր բազմերն եւ մեզ
հարկ չը կայ խառնուելու նոցա եւ մեր սեփ-
հակառակութեան պէս կարգադրելու զայնս : »

Լրագիրը կ'աւարտէ իւր յօդուածն հե-
տեւեալ խօսքերով .

« Մենք պէտք չ'ունինք դաշնակիցներու,
սակայն տարօրինակ պիտի լինէր եթէ չ'ու-
զէինք որ մեր հակառակորդներն մեզմէ զատ
ուրիշ հակառակորդներ եւս ունենան : Մենք
կատարելապէս անհաւատալի կը համարենք
թէ Գերմանիա երբ եւ իցէ ուղած լինի մեր
հետ կալու ընելու առիթներ որոնել : Իսկ
եթէ Անգլիա (որ հաւանական է) բազմաւելու
լինի մեր հետ մերձաւոր կամ ծայրագոյն
արեւելքի մէջ, այն ժամանակ արդի Ֆրան-
սան, որ նորա հետ եւս նոյնչափ հակառա-
կութիւն ունի որչափ Գերմանիոյ հետ, հա-
ւանաբար լոկ ականատես չը պիտի մնայ կրու-
ւոյն : Արդ, այս պարագային, դժկամակեղու
իրաւ որ պատճառ մը չ'ունինք . . . »

Պ. Տ.



ԱՆՇԵՏԱՅԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ

Մ Ա Ս Ն Բ .

Ս Ո Ռ Ա Յ Ո Ւ Մ

(Շար . նախորդ թուէն)

Երեսփոխանները կ'զգային որ պատրաս-
տուած դաւ մը կար, ամէն մարդ կացու-
թեան ծանրութիւնը կ'ըմբռնէր, բայց ոչ որ
բացորոշ կերպով Խոսրովը ամբաստանելու
կը համարձակէր, այնքան ծանօթ էր անոր
վտանգաւոր անձ մը լինելը :

Սահմանադրութեան հիմնադիրներէն ծե-
րունի երեսփոխան մը խօսք պահանջեց ու
պահ մը յաջողեցաւ ստանալ . ալեհեր բայց
դեռ աւուրդ ու կայտառ բժիշկ մ'էր Տօք-
թօն Բ . պէյ, որոյ այսքան յուզեալ ձայնը
լսուած չ'էր դեռ . նա այն անձերէն էր ո-
րոց միշտ պատկառանքով ունկնդրութիւն
կը լինէր : Իր երիտասարդութեան ատեն
Սահմանադրութիւնը տուեր էր ազգին իրեն
պէս մի քանի երիտասարդաց հետ խորհե-
լով ազգին ապագային, բեղմնաւոր ու ազա-
տական խորհուրդ մ'էր զոր յաջեր ու դուր-
ծադրեր էին . իր երկն էր ազգային օրէնքն
եւ զաւակի մը չափ կը սիրէր զայն : Այդ
օրէնքը ջնջելու պահանջումն իր աչքին ոճիր
մ'էր :

Ամէնքը պահ մը լռեցին այդ մեծարելի
ծերունւոյն ձայնին առջեւ :

— Կը յիշեցնեմ Դիւանին, ազադակեց
նա, որ Սահմանադրութեան դէմ խօսելու
ազատութիւն չի կայ այս ժողովին մէջ . խո-
սելու ազատութիւնն հող կանգ կ'առնու .
Դիւանին պարտքն է ժողովին կամքն հար-
ցնել իմանալու համար թէ կը հաճի՞ ատե-
նաբանին մոտիկ ընել : Ներեցէք որ ըսեմ
նաեւ թէ Դիւանին վեհերոտ ընթացքը ժո-
ղովին անարդանք մ'է :

Որոտընդոտ ծափահարութիւն մը մէկ

կողմէն, դու ու գոչումը միւսէն, վերսկսան մեծագոյն սաստկութեամբ :

Նախատինք չի բաւեցին . Խոսքովի հակառակորդը քաջաբերուեր էին ու ամէնէն ծանր ամբաստանութիւններն ապտակի պէս անոր երեսին կը զարնէին :

Վերջապէս Դիւանին եւ քանի մ'ազդեցիկ երեսփոխանաց օգնութեամբ վայրկեան մը կարգը վերահաստատուեցաւ ու բուէարկութեան արդիւնքն, ատենաբանն ունկընդերելու մասին, բացարձակ առաւելութեամբ « ոչ » մը երեւան հանելով, Խոսքովի բոլոր յատակագիծներն հիմնայատակ կործանեց :

Վար իլաւ բեմէն, կաս կապուտ կտրած ամօթէն ու բարկութենէն, բայց դեռ խորոխ ու սպառնալից մեկնեցաւ ժողովէն, մէկտեղ տանելով իր կործանեալ յայտերուն հետ վրէժխնդրական սլաքաստութիւններ :

Խոսքովի մեկնելովը բեռ մը կարծես վերցաւ ժողովին սրտին վրայէն . այն մարդուն վախէն ոչ ոք իր համոզումը կրնար ազատութեամբ յայտնել, այդ մարդն օրորական մ'էր . անոր հեռանալէն վերջն ամէնքն իրենց լեզուին տուին . մին սլաքասաւանաց քուէ մը առաջարկելու չափ յառաջ գնաց . ժողովն ազգասիրական եռանդով մը յուզուած էր . երեսփոխանները զիրար կը շորհաւորէին . ու այսպէս վերջացաւ այդ նշանաւոր ու պատմական նիստը :

Խոսքով տուն դարձաւ . Եւգինէ դուրս ելած ու վերադարձած չէր դեռ, թէ եւ ժամը 12 ի մօտ էր . Խոսքով՝ արդէն ցամաք լեցուած, իր կնոջ րնթացքն աններելի դատեց . ընտանեկան հորվոյն վրայ մեծ փոթորիկ մը պատրաստուած էր ու տրկնոջ վերադարձին կ'սպասէր պայթելու համար . ժամը կէսն էր ու ոչ ոք երեւան ելած էր . ո՛ր գացեր, ո՛ր մնացեր էր . Խոսքով իր կատաղութիւնն սպասաւորներուն դէմ դարձուցեր էր, չը գիտնալով որի դէմ յագուրդ տալ իր բարկութեանը :

Մէկին քառորդ մնալով, Եւգինէ տուն դարձաւ բաց կառքով մը . յայտնի էր թէ զուարճութենէ մը կը վերադառնար, կ'երեւէր թէ քիչ մը ոգելից ըմպելիք ալ խումած էր, որովհետեւ այտերը վարդագոյն, աչերը կարմրած, զուարթ ու բարձրաձայն

խօսելով խնդալով վար ցատկեց կառքէն :

Սեւ կռնատինէ ճոխ ու գեղեցիկ չըճագեցած մը հագած էր որ անոր գիրուկ ու բարեձեւ հասակն ու ուռուցիկ կուրծքը կը սեղմէր . մազերը սեւ, վալլուն ու երկայն, անգլիական ձեւով ու վայելչութեամբ յարդարուած, հազիւ հազ կ'ամփոփուէին ակթասէ ծոպերով զարդարուած յարդէ գլխարկի մը տակ՝ որոյ ձեւն իտալացի աւագակներէն առնուելուն համար, պոչիկն կը կոչուի :

Երեսը ներկած, դէմը ճերմակ ու կարմիր, արտեւանունքն ու յօնքերը սեւ, շրթունքը լայն ու հեշտաւետ, ունեքերը դողող ունն, աչերը փայլուն, կուրծքն՝ աննման ու խոտմնալից՝ թափանցիկ տանթելներով ծածկուած, որ իր գահալէժ ելեւէջովը կը մատնուէր, ձեռնոցները մինչեւ ուն երկարած ու ձեռքն հովանոցի տեղ մեծագին խարազան մը, ահա այս ձեւով Եւգինէ իր ամուսնոյն դէմն ելաւ :

Խոսքով՝ առաջին անգամ ըլլալով՝ զարմացաւ ու սքանչացաւ այսքան վայելչութեան ու լրբութեան վրայ :

Ի՞ր կինն էր այս գեղանի էակն որ զաշխարհ մոլորեցնելու կարող կը թուէր . Խոսքով ազդեցաւ ու միանգամայն ներքին հըպարտութիւն մը զգաց :

Ի՞նչպէս մինչեւ հիմա աչքին չէր զարկած այդ հրապուրիչ մարմինն, այդ պաշտեի կինն որ վեհերստութեան օրէնքներն անդիտանալուն համար թերեւս այնքան գեղասպան ի'երեւէր :

Խոսքով յանկարծ վայրենի իղձ մը զգաց իր սրտին մէջ, հրաշէկ երկաթի մը այրուածքին նման . մոռցաւ իր կոցութիւնը, քայքայումն, այն օրուան պարտութիւնը, բարկութիւնը, վրէժն ու ամէն ինչ : Զարմանալի երեւոյթ մ'էր տսի մարդկոյն, տկարութեան, երբ մինչեւ այն վայրկեանը միայն մեծութեան, փառաց ու հարստութեան խորհուրդներով համակուած այս մարդն՝ ո՛չ թէ օտարուհոյ մը հանդէպ, ո՛չ, այլ իր կնոջ համար, իր երկու տարուան կնոջ դէմը վաւաչոտ ու յիմարական սէրով մը կը տագնապէր :

Սպառնական շեշտ մը պատրաստեր էր, սակայն փայփայող ու ողորձ ձայն մը միայն ելաւ բերնէն .

— Ո՞ւր մնացիր մինչեւ հիմա :

— Ես ալ աղէկ մը չը գիտեմ. ո՞ւր չը մնացի որ . ցորեկուան ճաշէն վերջը ժամ մը միայն կորսնցուցի յարգարանացս համար . յետոյ Տիկին Ա* ին հետ Մասլաք գացինք . անցեալ օրուընէ օրուէր էինք . ո՞վ գտնանք հոն կը հաւնիս . նախ եւ առաջ մեծ մարդերէն , էֆէնտիներէն սկսինք , բանի որ այնպէս հաճելի է ձեզի : Կարապետ եւ Եր. ուանդ էֆէնտիներն իրենց տիկիններով միասին , անկից վերջն , այն երիտասարդ պատկերահանն որ մեզի մէկ երկու անգամ եկաւ . գիտես որ շատ պաշտելի տղայ մ'է այդ տղան . յետոյ մեր Արմենակն իր եղբորորդւոյն հետ որ Բարիզէն նոր եկած է հոս արձակուրդի ամիսներն անցունելու համար . շատ զուարճախօս անձ մը . երգեցինք , պարեցինք ու զբօսեցանք , նախանաւանդ բաւական գարեջուր խմեցինք եւ շիտակն ըսելով ինձմէ զատ ամէնքը գինովցան :

Եւգինէ ինքզինքը դուրս ձգելու իրաւունք չ'ունէր . գլորեց քան թէ պատմեց այս ամէնը մէկ շունչով :

Խոսքով պարզապէս հմայուեք մնացեր էր : Կարելի՞ բան էր որ մինչեւ հիմա մեկուսացման մէջ թողած լինէր իր կինն ու ուրիշներ միայն ճանչցած ու պաշտած լինէին զայն . Խոսքով զգաց նախանձու օրդն որ իր սիրտը կը կրծէր :

Այդչափ ատեն անսխալ ու անտարբեր , գրեթէ թշնամացած մնալէ յետոյ , հաշտութեան ու համակրութեան ճամբան խիստ դժուարին երեւցաւ . ի՞նչ ձեւով պիտի ըսկըսէր յայտնել անոր իր յանկարծական փոփոխութիւնը :

Ճաշի ատեն էր . Եւգինէ զարմացաւ որ այն իրիկունը նախատեսեալ կ'իւր տեղի չ'ունեցաւ Խոսքովի կողմէ , ընդհակառակն գրեթէ համակրական ձեւ մը նշմարեց անոր վարմունքին մէջ . Խոսքով ճաշին վրայ սովորականէն աւելի գինի խմեց ու իր կնոջ կատակներ ըրաւ : Եւգինէ ասոր չէր սպասեր . հասկցաւ որ դադարիք մը կար ու իր կանացի բնազդմամբ չ'ուշացաւ իր ամուսնոյն հաշտութեան փափագը գուշակելու :

Ինչպէս ամէն անձնապաշտ կին , Եւգինէ խիստ մեծ դադարիար ունէր իր անձին վրայ . վաղ կամ անագան կ'սպասէր իր ա-

մուսինն իր ոտից տակ տեսնել , ուստի Խոսքովի ընթացքը մեծ հաճութիւն պատճառեց , բայց անոր փաղաքուշ խօսքերը գերազանց կերպով անհամ թուեցան իրեն , Խոսքովի ո՛չ գգուանքին եւ ո՛չ անուշ լեզուին կարեւորութիւն ընծայած էր երբէք , հետեւապէս անոր անձնատուր լինելը տեսնելով իր ցուրտ ու հակառակորդ բնաւորութիւնը մէկդի չի ձգեց :

Խորով , գինւոյ շոգիններէն մոլորած , իր կինն համբուրել ուզեց . Աւգինէ խորին ու անդիմադրելի զգուանք մը զգաց այս մարդուն փայփայանքէն :

— Թող զիս կը խնդրեմ , ըսաւ սառն կերպով , այդչափ մօտութենէն չ'եմ ախորժիր :

Աւ իր սենեակն առանձնացաւ ու դուռը փակեց :

Յնորքներով , իղձերով ու խրատներով լեցուն գիշեր մ'եղաւ այն առաջին գիշերն յորում Խոսքով իր կնոջմէն հեռու մնալուն բոլոր կարօտն ու բոլոր դառնութիւնն զգաց :

Մտածեց որ ամուսնակ սն կեանքը կարի ծանրակշիռ հանգամանք մը կ'զգենուր իր յիմարական տենչանքին սլառճառաւ :

Ինչպէս ըսինք , առանց Եւգինէի համակրող կամ համակրելի լինելն ստուգելու ամուսնացած էր հետն անոր ազատութիւնն յորդեղու պայմանաւ . առեւտրական գործ մ'էր զոր կատարեր էր թիւերու ու շահու վրայ հիմնելով իր ամուսնութիւնն առանց սէրն ի հաշիւ առնլու , ու հիմա որ անզուսպ ու անբացատրելի կ'ըր մը զինքն իր կնոջ ստըը կը ձգէր , կը խորչէր , մեծ մտատանջութեամբ , թէ ի՞նչ տեսակ ընդունելութիւն մը պիտի գտնէր հոն :

Եւգինէի բնաւորութեան նայելով , այդ ընդունելութիւն բաջալերիչ լինելէ խիստ հեռի կը թուէր :

— Անցան մի քանի օրեր , յաղթական կ'ինն իր զբօսալից ընթացքը փոխելու կողմը չէր բնաւ . Խոսքովի բոլոր ներդաւանութիւնն ու բոլոր մտերմութեան փորձերն ի դերեւ ելան :

Եւգինէ կարծես զինքը ծայրայեղ միջոցներու դիմել տալու առիթ կ'որոնէր :

Խոսքովի քաղցրութեան ու համակրութեան վերջին ջանքերը կատարելէն կէս

ժամ վերջն էր որ նորա կինը տիկնոջ մը հետ ժամադրութիւն մը սլառնառ բռնելով դարձեալ մեկնելու կը պատրաստուէր :

Ամուսինն զգաց բարկութեան կրակն որ իր գլուխն ու միտքը կը յեղաշրջէր :

— Դուրս չը՛ պիտի ելնես, գոչեց նա կիրքէն ու զայրութէն կուրցած, երբ որ տեսաւ որ Եւգինէ դուրս ելնելու վրայ էր :

— Ձեր կալանաւորը չեմ կարծեմ ու դուք բանտապահ մը չ'էք :

— Ամուսինդ եմ ու ինձ պիտի հնազանդիս :

Երիտասարդ կինն այս ձեւերուն վարժուած չ'էր . ինքն ալ զայրանալ սկսաւ :

— Հնազանդութիւն, ըսաւ նա, հա՛, հա՛, շիտակը զիս խնդացնել սկսար, ես ո՛չ քու աղախինդ եւ ո՛չ ալ սպասաւորդ եմ, քու ծառաներուդ հետ վարուէ՛ այդպէս :

— Ձը պիտի ելնես դուրս, կը հասկնամ, գոչեց էրիկն ինքնիրմէն բոլորովին դուրս ելած ու բռնութեամբ քաշելով կնոջը թեւէն :

Եւգինէ դեղնեցաւ :

— Դո՛ւն ալ չափն անցուցիր, այստեղ Խարբերդի լեռը չ'է, ինձի նայէ՛, ըսաւ անոր, քու հայրենակիցներէդ շատերը մեր տունն իրրեւ սպասաւոր պահած ենք, դուն ալ կրթութեամբ անոնցմէ տարբերութիւն չ'ունիս եղեր . վրաս ձե՛ռք վերցնել, ալ ամէն ինչ վերջացաւ, հիմա հօրս տունը պիտի երթամ . չո՛ւտ, չուտ կառք մը բեր, Յակոբ, պոռաց սպասաւորին՝ որ էրիկ կնոջ մէջ տեղի ունեցած կռիւն հասկնալու համար դրան մօտ եկեր էր :

Ասիւր ծանր կերպարանք մ'ստացաւ . Խոսրով իր կիրքէն շփոթած իր կնոջ վրայ իշխանութիւն ունենալ կարծեմ էր . անոր պատասխանն իր դիրքին ինչ լինելն հասկըցուց . Եւգինէի պատասխանը պաղ ջուրի փռի մը պէս անոր խելքը գլուխը բերաւ . արդարեւ անկէ հնազանդութիւն չ'էր կրնար պահանջել . իրենց ամուսնութեան առաջին պայմանն էր այդ . հօրը տունը վերադառնալու սպանալիքը մանաւանդ զինքնէն ահաբեկեց . անկից զատուիլն ուրիշներու, բացարձակապէս ուրիշներու յանձնել էր զայն :

Խոսրով կացութիւնն ըմբռնեց . ինքն ամուսնական իրաւունք ու իշխանութիւն չ'էր

ունեցած բնաւ ու հիմա որ իր կնոջ օժիտն սպառեր լմնցուցեր էր, հիմա որ նեղութիւնն հասնելու մօտ էր, կնոջմէն բաժանումն աշխարհ իր վրայ ծիծաղեցնելու միայն պիտի ծառայէր :

Այս գործնական ու դրական մարդն ամէնէն մեծ վրդովմանց մէջ անգամ իր հաշիւը չ'էր մոռնար :

Հետեւապէս սպանալեաց ճամբան թողուց աղաչանաց թելը ձեռք առնլու համար . ո՛չ որ Խոսրովին չափ յաջողակ էր նուաստանալու արուեստին մէջ . Պահ մ'առաջ խորխտ ու բիրտ լեզու գործածող այս մարդը չի վարանեցաւ իր դէմքը փոխելու, աղաչելու, ու հեծկլտեալ ձայնով, աչքերն արտասուալից, իր կնոջ ոտքն ինկած, ներումն ուղեղու անկից :

— Գիտեմ, կը մրմնջէր նա հեկեկանօք, խնոնուելու իրաւունք չ'ունիմ բեզի, Եւգինէ, դուն քու տէրդ ես . մի՛ մեղադրեր զիս . միշտ կը լքանես էրիկդ ու ուրիշներու հետ կը զուարճանաս, անպատիւ բան մը չ'ես ըներ բնաւ, ադոր տարակոյս չ'ունիմ, բայց ես ալ ամուսինդ եմ ու քեզ կը սիրեմ . . . :

Եւ արդարեւ կը սիրէր հիմա կատաղի ու մոլեգին սիրով Ու այս աղբսարկու եղանակին վրայ շարունակեց : Իր հեշտամուլ ու վայրենի իզձերը՝ կնոջը մօտ ըրած թախանձանօք աւելցան ու զայրացան, եւ այս յուզմունքով իր պերճախօսութիւնը կարծես թէ համոզիչ դարձաւ . Եւգինէի քով ծնրադրեր, անոր ձեռքերը կը բռնէր ու կը համբուրէր, կը հոտոտէր, կը գգուէր . մանկամարդ կինը չ'էր պատասխաներ . այս աստիճանի անզուսպ կիրք մ'ազդած լինելն անոր անձնասիրութիւնը կը գգուէր :

Եւգինէ գոռոզացաւ ու սարսափեցաւ միանգամայն : Այս բուռն սիրոյ արտայայտութիւնն այն մարդու կողմէ որ իր էրիկն էր, վերջապէս զինք վախով լեցուց :

— Տղայ մի՛ ըլլար, ըսաւ վերջապէս իր էրիկն ոտքի վրայ հանելով, անդին նստէ, ծառայներն ի՛նչ կ'ըսեն հիմա :

Եւգինէի ձայնն հանդարտ, գրեթէ բաղք էր . Խոսրով ուրախութենէ արբիւ եղաւ :

— Ես քու գերիդ, քու շունդ եմ, Եւգինէ, ըսաւ այս յիմար մարդը բոլորովին խեղացնոր : Ինչպէս կ'ուզես այնպէս վարուէ

հետս, բայց մի՛ սրղողիր ինձի հետ. գնա՛ զուարճացիր, դուռն զուարճութիւնը կը սիրես, ես ալ քիչ մ'աշխատութիւն ունիմ. քէն մի՛ պահեր ինձի դէմ. սիրոյս չափազանցութիւնը զիս յուզեց. գիտես որ միշտ քու հաճոյիցդ համակերպած եմ:

Ու այն օրէն Խոսրով իր կնոջ ճշմարիտ գերին ու շունը դարձաւ. մեծ պահանջումներ չ'ունէր. իր կնոջ մէկ ժպիտը կամ հողմահարով երեսին զարկած մի փոքրիկ ապտակն իրբեւ գգուանք կը բաւէր. այն օրուան կոիւէն վերջն, ալ Խոսրով բնաւ չը համարձակեցաւ կնոջն ո՛ր երթալն, որի՞ երթալն հարցնել կամ փնտռել. կնոջը բարի կամեցողութեանը ձգուած էր այս կէտն որ քիչ կարեւոր չ'էր, քանի որ Խոսրովի ձեռքն հասած անստորագիր նամակներ իր կնոջ այցելութեանց վրայ տարօրինակ մանրամասնութիւններ կը հաղորդէին:

Յանկարծ իր կինը տունէն ունեցած բացակայութիւնը վերջացուց. Խոսրովի անհաւատալի թուեցաւ առջի բերան ասիկայ. իրեն հաճելի՞ ըլլալու համար արդեօք Եւգինէ տունը կը կենար:

Ամուսնոյն այս քաղցր տարակոյսը շուտով փարատեցաւ. Գիւրութեամբ նշմարեց որ իր պրիշի ընկերներէն հարուստ վաճառական մը, որու հետ գիշերներն, ուրբաթ ու կիրակի օրերը կը միանային թուղթի խաղալու համար, իր կնոջ համակրութիւնը շահած կ'երեւէր. հասկցուեցաւ որ Եւգինէ յատկապէս անոր թուղթի համար իրենց տունը գալիք օրերն այցելութեան չ'էր երթար:

Խոսրովի այս խաղի ընկերը՝ պարոն Մարեմեան՝ ամէնէն զիրար յաղթուող ու ամէնէն առատաձեռն թուղթի խաղացողներէն մին էր. նամանաւանդ Խոսրով քունիցս փոխառութիւններ ըրեր էր անկից եւ չ'էր կրցած դեռ վճարել. Մարեմեան առանց նախկին հաշիւները պահանջելու ի հարկին անոր ծառայութիւն ընելու պատրաստ մէկն էր. այսպիսի մարդ է մը անկարելի էր յարաբերութիւնը կտրել. Այր ու կնոջ սիրալիր ընդունելութեանը վրայ հետըզհետէ այս վաճառականը տանը մէջ անպակաս հիւր մը կամ լաւ եւս է ըսել տանուտէր մը եղաւ: Խոսրով ցօրեկուան ու իրիկուան ճաշի թող չ'էր տար զայն, վասն

զի երկու հարիւր ոսկւոյ նոր փոխառութիւն մ'ընելու վրայ էր. նեղութիւնը շատցեր ու սրահանջատէրները տան դուռը ձեռք առեր էին:

Բայց Եւգինէ ի՞նչպէս զատուեր էր իր բազմաթիւ մտերիմներէն:

Եւգինէ բծնող ու հեզնող բնաւորութիւն մ'ունէր. հարուստ վաճառականը մինչեւ ցայն վայր ծանօթ էր իրեն այս կամ այն դերասանուհւոյն համար ըրած շոյլ ու խելառ ծախքերովը:

Եւգինէ իր ամուսնոյն բերնէն անգամ քանիցս լսած էր անոր արտակարգ նուերները:

Կանանց համար ամէն զոհողութիւն ընելու պատրաստ երեւցող այս մարդն իր հետաքրքրութիւնը շարժեց. մօտէն ճանչնալ կ'ուզէր թէ ի՞նչ տեսակ անձ մ'էր այս Մարեմեանը. ուստի իր սովորութեան հակառակ ուրբաթ օր մը դուռս չ'ելաւ ու էրկանը պրիշի խաղին ներկայ գտնուեցաւ. անխելք մէկը կարծեր էր զայն, բայց տեսաւ որ խօսակցութեան մէջ բաւական հանձարեղ էր. իր համբաւաւոր ու մեծածախ արկածներուն վրայօք եղած կատակներու մասին՝ իշխանի մը վայելուչ համեստութեամբ ու փորձառու սիրահարի մը պատիւ բերելիք գաղտնապահութեամբ պատասխանեց նա:

Այս համեստութիւնն ու գաղտնապահութիւնը խիստ հաճելի երեւցան Եւգինէի. անոր վայելուչ շարժումներն ու ձեւերը, հազուադէպ ու խօսակցութիւնը լաւագոյն տպաւորութիւն յառաջ բերին:

Մարեմեան ամուրի հետեւապէս ազատ էր. երեսուն եւ հինգ տարեկան կար ու հետեւապէս պատանի սիրահարի մը նման փոփոխութիւն չ'էր. իր էրկանը մտերիմն էր եւ հետեւապէս անոր հետ տեսնուելու մէջ զժուարութիւն չ'էր կար. հարուստ էր եւ հետեւապէս քիչ մը բան կրնար վրայ առնուլ անկից: Հարկ է խօստովանիլ որ Եւգինէի այս տրամաբանութիւնը կատարեալապէս ուղիղ էր:

Միւս կողմէ Մարեմեան այն վարպետորդ իներէն էր որք խառնազնաց ու անառկութեամբ բեղմնաւոր անցեալի մը պարգեւած փորձառութեան շնորհիւ, մէկ նայուածքով պաշտելի կին մը՝ պարկեշտ կնոջմէ

մը կը զանազանեն՝ Եւգինէ՝ անտարակոյս՝ նետուելու որս մը չէր :

Երկու կողմն՝ այսպէս պատրաստուած՝ չուտով զիրար հասկցեր էին : Մարեմեան չէր ուշացեր Եւգինէի միւս տարփաւորներն ի բաց վանելու , ու ինչպէս ամէն յաղթականի իրաւունքն է՝ պատերազմի դաշտն իրեն մնացեր էր միայն :

Ահա այս եղանակաւ Եւգինէ իր բացակայութիւնները վերջացուցած էր . սակայն կամաց կամաց յիմար ու անբացատրելի տրկարութեամբ մը կապուած էր իր նոր տարփաւորին . այս խորոխ ու ամբարտաւան կինն՝ որ իր համանեաց հետ իր էրիկէն լաւագոյն կերպով չէր վարուեր մինչեւ այն ատեն՝ Մարեմեանի քովը կատուի մը պէս գգուալից ու համբերող դարձած էր :

Այս նոր կապակցութիւնն երկար չը տեւեց ամէն կողմ իմացուելու համար . Խոսքով լռելեայն ընդունած էր այս ծանր կացութիւնը . Մարեմեանի , Եւգինէի ու իր մէջ որոշուած ու ճանչցուած տեսակ մը ամօթալի դաշնադրութիւն մ'էր որ երեք կողմերն հաւասարապէս գոհ պիտի ընէր :

ԳԻՒՆՈՒ ԶՕՀՐԱՊ
(Շարունակել)

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

ՈԳԵԽՕՍԵ Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՍ

ՆԻՒ-ԵՈՐԻ, 14 Յուլիս

Ինչպէս որ Միացեալ Նահանգք երկիր են ուսմանց , արհեստից եւ ամէն տեսակ գիտութեանց , այնպէս եւ լաւագոյն հայրենիք ու կեդրոն եղած են միախմբուելու , ոգեխօսներու , հմայից եւ վերջապէս այս վերջնոց հաւատ ընծայող այնպիսի մոլեռանդներու որոց նմանը միայն կը կարծենք գտնել մեր գլխահիկ դասու ժողովրդեան մէջ , որ փոքրամեծ հացի , Խոպի շինողներու , ասայ պարտաւորողներու , ասոր համբողջներու եւ այլոց կը հաւատան կուրօրէն , եւ որոց ոգէտ ու նախապաշարեալ ածականներն

կուտանք միշտ՝ գուցէ կարծելով թէ սոցա նմաններն չեն գտնուիր եւ կամ շատ հազուադիւտ են քաղաքակրթեալ աշխարհներու մէջ , նաեւ թէ լոյսը վանած է նախապաշարութեանն՝ ճշմարտութիւնը դնելով ժողովրդեան առաջ : Աւելորդ է ըսել թէ անհիմն է այս բոլորովին :

Ոգեխօսութեան , միտիմոթեան ու հրմայութեան անթիւ տեսակներն կը թուին ծնունդ առած լինիլ հոգւոյ խորին գաղտնիքէն . գաղտնիք մ'որ ծածկուած է թանձրագոյն ու անթափանցելի քողերու ներքեւ : Հոգւոյ գոյութեան խնդիրն հաստատեալ ճշմարտութիւն մ'է այժմ՝ եւ գրեթէ բոլոր աշխարհ կ'ընդունի էութիւնն բանի մը մարդուս մէջ որ կը շարժէ մարմինը , կը խօսի աղոր միջոցաւ եւ միով բանիւ ունի զգայնութեան , իմացականութեան ու գործունէութեան վորութիւններն : Նմանապէս ճշմարտութեանց կարգին մէջ է հոգւոյ անմահութեան խնդիրն , եւ արդարեւ խիստ նեղ , անձուկ ու սահմանափակ ուղեղ մ'ուսնեալու է այսչափ մեծ զօրութիւն մը ոչնչանալու գաղափարին ենթարկելու համար , բանի որ «չ-է» չունի նշանակութիւն եւ ոչինչ բառէն զատ չը կայ տիեզերաց մէջ բան մը որ ոչինչ լինի : Եւ սակայն ի՞նչ է հոգի , եւ ո՞ր կը գնայ այս անտեսանելի զօրութիւնը մարմնէն բաժնուելէ յետոյ եւ հետեւից կուգան նորածիններուն կեանք տրուող զօրութիւններն . գրեթէ չը կայ գոհացուցիչ պատասխան եւ գիտութիւնը չէ կրցած տակաւին եւ գուցէ չը պիտի կրնայ լուծել այս հարցերն : Եթէ մէկը կարողանայ հոգւոյ մեծ խնդիրն լուծել , նա գոհացուցիչ պատասխաններ տուած պիտի լինի անտարակոյս այս բոլոր կնճիւղներուն , եւ սակայն հոգին ճանչնալն ու անոր ծանօթանալն իւր բոլոր արեղծութեան մէջ՝ վեր է մարդկային մտքերէ , որոց մէջ կրնան սեղմուիլ միայն մտքերի խնդիրներ : Այսու հանդերձ միտիմոթ , ոգեխօսք եւ այլք կը պարծին թէ խօսելով ու յարաբերութիւն ունենալով հոգւոյ հետ շատ աւելի բան գիտեն այս մեծ զօրութեան վրայ բան իմաստասէրք ու գիտունք :

Այս յուզիչ խնդիրներն ներկայ դարուս մէջ չէ միայն որ տակն ու վրայ կ'ընեն ագգերն ու ժողովուրդներն . շատ դարեր ա,

ռաջ այս բոլորն ծանօթ էր աշխարհի . հին պատմութեանց եւ նոյն իսկ սուրբ Գրոց մէջ շատ մը հետքեր դիւրութեամբ կը տեսնուին :

Հին դարուց մէջ հմայութեան, կախարհութեան, ոգեխօսութեան եւ այլոց հետեւողներն աւելի մեծ թիւ մը ունէին, որոց բեկորները մնացած են տակաւին արեւելեան ներկայ ազգաց մէջ, ուր վնուկը, տէրվիչը, բաղդասացը, կախարհքը եւ այլք մեծ քանակներ ունին անթիւ հաւատացեալներով : Սակայն բոլոր ասոնք ու քաղաքակրթեալ ժողովրդոց կարող միտիմբ ու ոգեխօսք անկարող եղած են վերջնական լուծում մը տալ սոյն խնդրոյ՝ հանդարտեցնելով հասարակութեանց մտքերն, եւ ասկէ զատ չեղաւ տակաւին գիտուն մը որ հաստատէր ու ապացուցանէր թէ հոգիք կ'այցեկեն զաշխարհ ու յարարերութիւն կըրնան ունենալ մեզ հետ . . . միւս կողմէ ամենէն թերահաւատն ու անհաւատն այս խնդիրը վերջնականապէս մերժելու ու դորա ստութիւն եղած լինին հաստատելու համար փաստեր չէ կրցած ներկայացնել անհանգիստ մտաց . եւ հետեւաբար ոչ մի անձ իրաւունք ունի ծաղրելու ու քամահրելու զայս մեծ խնդիրներ, դոցա լուծուելէն առաջ : Այսօր Եւրոպիոյ եւ մանաւանդ Միացեալ Նահանգաց մէջ միտիմբ այնպիսի ցոյցեր ու փորձեր կ'ընեն որ տեսնողը ի հարկէ ստիպեալ, կամայ ակամայ կը հաւատան անլուծանելի գաղտնիքի մը . նոյն իսկ Հնդկաց ֆէթիշներու արարքներն կ'ապացուցանեն թէ գիտութեան գիտցած ու ըմբռնածէն վեր կայ բան մը, ծածկեալ զօրութիւն մը, որ ֆէթիշն կը պառկեցնէ գերեզմանին մէջ շուրջ բառասուն օրեր . . . :

Ըսինք վերը թէ Միացեալ Նահանգ միտիմբներու լաւագոյն հայրենիքն եղած է : Արդարեւ ճշմարտութիւն մ'է այս : Ոոյն երկրի բոլոր մեծ քաղաքներն ոգեբաններով լեցած է : Նիւ-Եորք, Պոսթոն, Չիքակո եւ այլ մեծ քաղաքներ միտիմբներու բանալիներ կը սնուցանեն որոց զարմանալի արարքներն շատ անգամ հրապարակ կ'ելնեն հսկայ մասիոյն միջոցաւ : « Փարիզըն յմերիկայ » վէպը փոքր ապացոյց մը չէ ամերիկեան միտիմբներու ստուար բազմութեան . ասկէ զատ եթէ ընթերցողը Պ.

Ելէֆաս Լէվիի « Իսթուառ տը լա մաժի » (պատմութիւն հմայութեան) անուն ստուար հատորին ունեցած են պատեհութիւն հանդիպելու, արդէն համալարծիք են մեզ հետ : Գուցէ օր մը առիթ ունենամ յիշեալ հատորէն բաղել քանի մը հետաքրքրական դէպքեր որոց դիւցազուններէն շատեր դեռ կ'ապրին եղեր յիշեալ հատորին հրատարակութեան պահուն :

Բայց ինչ հարկ հեռունքն գնալ . եթէ Նիւ-Եորքի մէջ այժմեան ծանօթ միտիմբներն ու բաղդասացները միայն թուենք, ապացուցած կը լինինք արդէն մեր մի քիչ առաջ ըսածներն : Սակայն որովհետեւ անուններու ցանկ մը չինքն անկարելոր բան մ'է, զանց կ'առնուք, ըսելով միայն թէ Ռօբլի մի քանի թղթակիցներն վերջին շաբթուս մէջ քսանէ աւելի նոր միտիմբներ ծանօթացուցին հասարակութեան, մի քանիին խարդախութիւններն եւս երեւան հանելով . այսպէս ալ յիշեալ մեծ թերթի մի խմբագիրն քանի մը շաբաթ առաջ Նիւ-Եորքի ստուարաթիւ բաղդասացներու շատերուն տուններն այցելած լինելուն առթիւ հրատարակած երկայն յօդուածին մէջ ընտանէ աւելի ապագայ դուշակողներու անուններն կուտար իրենց հասցէով մէկտեղ : Յիշեալ յօդուածագիրն մոռցած էր սակայն այցելել այն բաղդասացներն որք փայլուն ծանուցումներով կը խոստանան միշտ յաճախորդաց բերել ու ցոյց տալ իրենց մեռած կամ կենդանի մի ազգականին յիտուն սէնթի (կէս տոլար) փոխարէն : Արդարեւ շատ հետաքրքրական է այս եւ աժան, ու կ'արժէ փորձել . . . որոյ արդիւնք պիտի լսեն անշուշտ մեր ընթերցողը : Ով որ լսէ զայս բնական է որ հարցնէ ինքնիրեն . Եթէ այդ բաղդասաց այդչափ մեծ ազդեցութիւն ունին հոգիներու վրայ, ինչո՞ւ ուրեմն կ'ապասեն յաճախորդաց յիտուն սէնթի երուն . . . :

Վերոյիշեալ մեծ օրաթերթն կարծես թէ վերջերս մասնաւոր ուշադրութեան առարկայ ըրած էր հմայներու եւ միտիմբներու խնդիրն : Քանիցս իրարու վրայ երկայն յօդուածներ հրապարակ ելան միշտ հետաքրքրական պատմութիւններով, որոցմէ մին, որ պատճառ եղաւ այս տողերս գրելու, հարկ սեպած եմ ընթերցողաց ներ-

կայացնել համառօտելով զայն մեծ մասամբ, վասն զի նոյն յօդուածն լեցուցած էր Ռօբլի մէկ ամբողջ երեսն, որոյ թարգմանութիւնը դժուարաւ կը սեղմուի մեր թերթերու մէջ:

Ռօբլի արուեստագէտը ներկայ ամսոյս սկիզբները բարեկամութիւն կը հաստատէ անձի մը հետ, որոյ դէմքը ծանօթ է եղեր Նիւ-Եորքի, Չիքալոյի եւ այլ քաղաքացի միտիոններուն. այս մարդ կը հաւատայ եղեր թէ իւր մօր հոգին կը բնակի այժմ Տիկին Սոյլըր անուն անձին մէջ. արուեստագէտը շատ կը հետաքրքրուի զայս իմանալով, եւ յիշեալ ողբասօին հետ շատ մը տերմանալով կը ծանօթանայ ուրիշ շատ մը միտիոններու հետ ալ, որոց անուններն հրատարակած էին: Ահա մի քանիներն. Պ. Յովսէփ Կաֆրէյ, 530, Եօթներորդ Աւլընի. Տիկին Վիլիմա, 242, քառասուն և վեցերորդ փողոց. Սդոտտար Կրէյ 323, երեսուն և չորրորդ փողոց և և:

Քիչ ժամանակ յետոյ ռամկավարական թերթի մը թղթակիցն արուեստագէտին ընկերակցութեամբ, պէտք եղած յանձնարարականներով, կը գնան Պ. Կաֆրէյի տունն, ուր տեղի պիտի ունենայ եղեր միտիոնական ցոյցեր. այցելուք կ'ընդունուին Տիկին Կաֆրէյի կողմանէ որ միտիոնաւոր մ'է միանգամայն. մամուլ մարդիկներն կը մտնեն ներս ուր կը գտնեն տասն եւ ութն անձն կարգաւ նստած: Անեկալը կանոնաւոր ընդունարան մ'էր, կ'ըսէ յիշեալ յօդուածը, ապակիէ դուռներով բաժանեալ, որոյ ետեւ կը կենար փոքրիկ սենեակ մը սեւ կաթսեօք կահաւորեալ. ապակիէ դուռներու առջեւ կախուած էր մեծ ջահ մը, եւ ուրիշ կանթեղ մ'ալ կախուած կար սենեկին մէջ տեղ, որն որ (սենեակը) զարդարուած էր ճաքոնական հովազարներով, արեւանոցներով և և. Սենեկին մէկ կողմը պատին փակցուած ուրիշ քարիւղի ճրագ մը կ'երեւի եղեր որ և կը կանոնաւորուէր հոգիներու միջոցաւ:

Սենեկին մէկ անկիւնը կեցած կայ սենյան մը սեւ ծածկոցով մը, որոյ վրայ դըրուած կային այլ եւ այլ տեսակ նուագարաններ. ներկայը ողջոյն կիսաշրջանակ մը կապած են. ալ կողմը նստեցաւ գէր մէկը Բորըր անունով. սա կանոնաւոր հան.

դիսական մ'էր որոյ մի հանգուցեալ ամուսնոյն հոգին այցելած էր զինքը գիշերանց: Սորա կից կը նստէր տխուր երեսով մէկը իւր քովը ունենալով երկու օրիորդներ համեմատեալ ծրարներով: Խոշոր մարդ մը, որուն «Տաֆթըր» անունը կուտային, սոցա քով նստած էր, որն որ ունէր մի քիչ համեմատեալ Տաֆթըրէն վերջ կուգային երեք Նիւ-Եորքի նորեկներ, որոց կը յաջորդէր գեղեցկադէմ գաղիացի մը իւր դասեր հետ մէկտեղ. կար նաեւ գիրուկ կնիկ մը եւ ուրիշ երկայն մազերով մարդեր որք կը նմանէին հին բանաստեղծներուն. ասոնցմէ վերջ կուգար Ռօբլի թղթակից ու արուեստագէտը Տիկին Կաֆրէյի քովը. այս վերջինը գեղեցիկ կնիկ մ'է բոսն տարեկան:

Տիկին եւ պարոն Կաֆրէյ բանիցս խօսակցելէ, դուրս ելնելէ վերջ նուագարաններն ու հովազար մը կը դրուի սենեկին մէջտեղը տախտակամանին վրայ, որոյ բոլորովը կը շարունակն աթոռներն եւ ներկայը: Ամէն բան պատրաստ էր, զօրու թիւնը գործի պիտի սկսէին: Այս միջոցիս բոլոր ներկայը ձեռք ձեռքի կուտային տան տիրոջ հրամանին համաձայն. ամէն բան պատրաստ էր, եւ ներկայը անհամբեր էին: Այս միջոցիս Ղուկասի խօսքերն ի մտի կը բերէին. «Այս է քո ժամը եւ զօրութիւն միտուածան»:

Շատ չանցած Պ. Կաֆրէյ ոտքի կ'ելնէր հետեւեալն ըսելու. «Տեսքը եւ տիկնայը, սկսելէ առաջ կ'ուզեմ քանի մը խօսք ըսել այս ցոյցին առթիւ. հոս երկու երեք անձինք կան այս գիշեր որք չը պիտի ընդունուէին ներս եթէ իրենց եկած միջոցին ներկայ լինէի (Նիւ-Եորքի մարդոց համար է): Ճշմարիտը կ'ուզեմ ըսել. եթէ դուք չէք հաւատար այս բանին, ժամանակն է որ բացայայտ ըսէք ինձ, որպէս զի դժուարութեան չը բաղխինք: Եթէ չէք հաւատար որ այս ամէն ըլլալիքներն ճշմարիտ չեն, դուրս ելէք անմիջապէս, վասն զի չենք ուզեր թերահաւատներ: Հոգիներն կուգան ու կ'երթան եւ մենք չենք գիտեր թէ ի՞նչ է իրենց ընելիքն: Այս գիշեր կարծեմ դոքա (իրենց յատուկ հոգիներն) բոլորն ալ չը պիտի գան վասն զի օդը ցուրտ է և և»:

Պ. Միտիոն իւր խօսքերը վերջացնելէ յետոյ վերստին կը նստի ու նոր պատուէր-

ներ կուտայ ու դարձեալ ոտքի ելնելով կը մօտենայ ճրագին, «Պատուէրներս յիշ» ըսելով կը մարէ զայն ու իւր տեղ կը վերադառնայ. սոսկալի խաւար մը կը տիրէ սենեկին մէջ, եւ ինչ խաւար. ամէն կարելի միջոցները գործածուած է եղեր որ և է ծակ կամ սլառահանի ճեղք բաց չը թողելու համար, եւ մթութեան հետ մէկտեղ լուծիւնն ալ տիրած է. միայն թէ հեկեկանաց ձայն մը կը լսուի եղեր Կաֆրէյի նստարանին մօտ, որոյ յաջորդած է շարժում մը օդին մէջ, որ զով զեփիւռի մը պէս հպած է ներկայից երեսներուն հաճոյք պատճառելով. զի սենեակը խիստ տաք է եղեր: Այս շարժումէն անմիջապէս յետոյ հոգի մը եկած էր, եւ արդէն ներկայներէն ոմանք ըսած էին նորեկի հասնելէն առաջ թէ «Ահա Ճօնի Կրէյ հոս է»: այս միջոցիս քանի մը ծերունի տիկիներ կը կանչէին. «Սիրելի Ճօնի, եկուր ինձ. չե՞ս գար»: Շատ չ'անցած այցելու հոգին գետնէն կ'առնուէր կիթառ մը ու նուագել կ'ըսկըսի, որն որ վերջանալէ յետոյ մութին մէջէն ներկայից ձայներ կ'ըսեն եղեր թէ «Ճօնի՛ վերսկսէ»: «Երկնային երգեր են ասոնք»: «Շնորհակալ եմք, սիրելի Ճօնի» եւ եւ: Պահ մը վերջ հոգին կայծակի արագութեամբ օդին մէջ կը բարձրանար, եւ ներկայք ոմանք կը հարցնէին «Ո՛ր ես Ճօնի» եւ նա կը պատասխանէր թէ «Հոս եմ»:

Վերջապէս այցելու հոգին քիչ մը ատեն ալ կենալէ ու խօսելէ յետոյ կ'աներեւութանայ, ու քանի մը րոպէներ սպասելէ վերջ, Կաֆրէյ կ'ըսէ թէ առաջին ցոյցը վերջացած էր: Ճապը կը վառուի ու ներկայք խօսակցիլ կ'սկսին այն հրաշալի գէպքին վրայ:

Ձի սուռնամ ըսել թէ Ուօլլա սոյն երկայն յօգուածը զարդարած էր նոյն միտիւմներու, հանդիսականաց, սենեկին, Կաֆրէյի տան եւ այցելող հոգիներու պատկերներով որք աւելի հրապոյր մը կուտային զայն ընթերցող անձանց:

Հոս կը վերջացնեմ նամակս, զի բաւական երկար եղաւ, թողլով շարունակութիւնն յառաջիկայ նամակին, պիտի սկսիմ յիշեալ միտիւմի երկրորդ ցոյցէն:

Հ. ԵԿԻՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՈՂԲ

Ի ՎԵՐԱՅ ՈՒԼԱԽԱՅ ԵՐԿՐԻ ՀԱՅԵՐՈՒՆ
Ի ԹՈՒԱԹՅԻ ՄԻՆԱՍ ՍԱՐԿԱՆԱԳԷ ԱՍԱՅԵԱԼ

(Շար. 3832 Թուէն)

Ի լուսանալ օր կիրակի,
Շտեֆան սարոն ձիւսորի,
Գայ մտանէ յեկեղեցի,
Աստուածածնի Հայոց ազգի:

Ելաւ ոտիւքն սուրբ խորանին,
Զխորհուրդըն առաւ ի յիւր ձեռին,
Յանկարծակի զարկ ի գետին,
Եւ չար ոտիւքն կոխան արին:

Չսուրբ մեռնէն էջմիածնին,
Զայն ալ վաթեց ի վերայ գետինին,
Շունք եւ մարդիկ կոխան արին,
Եւ աղիք մեր խարչատէին:

Զինչ որ գիրք կայր յեկեղեցին,
Եւ զմեծ պատկերքն խորանին,
Խաչեր եւ սկի մաղղզմանին,
Ոսկեջրած եւ մեծագին:

Ժողովեցին ի միասին,
Տարին դրին ի վիտղ երին¹,
Զվարդապետ եւ գաբեղանին,
Ձեռն կասած բանտարդելին:

Սչով բաղրին Հայոց ազգին,
Զեկեղեցիքն փակեցին,
Զչրուէքնն ամենայն մահրեցին,
Որ չի հանեն սուրբ անօթնին:

Ի լուսանալ միւս օրին,
Եկաւ պարոն ի վիտղերին,
Որմաջ² խրկեց Հայոց ազգին,
Բանալ տուաւ զեկեղեցին:

¹ Իշխանին տունն կամ պալատն:

² Պատգամաւոր:

Զինչ անօթ կայր իւրեան միջի ,
Խաչեր սկիւնք եւ չո րջառնիւր ,
Ոսկեջրած եւ մեծագին ,
Բաժկամաններ եւ րուրվառներ :

Ործաթապատ աւետարան ,
Շարականներ եւ սաղմոսարան ,
Այսմառուրք եւ տարեգիրք ,
Գանձտետր մաշտոց և այլ գրեան :

Զինչ անօթ կայր յեկեղեցին ,
Զամեն եսեան ժողովեցին ,
ԶԱստուծոյ տուն կողոպտեցին ,
Տարան դրին ի վեպերին :

Վարդապետին ու արեղային ,
Շատ չարչարանք նոցա տունին ,
Աղէկ մարդիկ ի մէջ մօրին ,
Հազար ջորով¹ աղատեցին :

Զար հրաման արար կրկին ,
Բերեւ տուավ զթօփեր բերդին ,
Սշով քաղբի զեկեղեցին ,
Մեծ մեծ թօփով աւերեցին :

Վասն մեղաց մեր անքնին ,
Փորձանք եկաւ Հայոց ազգին ,
Աշխարհականք եւ երիցանին ,
Ամենեքեան փախուստ արին :

Շատոնք փախան մօրին² մօտան ,
Ոմանք բազեր³ պահուեցան ,
Մերկ եւ բոպիկ ի շուրջ եկան ,
Եւ լալաղին մօլորեցան :

Հարք ի որդոց բաժանեցան ,
Որ այս չարիս հանդիպեցան ,
Բուն սիրելիքն քակտեցան ,
Վայ եւ եղուկ միաբերան :

Ի լուսանալ չորեքշաբթին ,
Պարոնն եկաւ ի վիսղերին ,
Եւ զինչ Օլա⁴ կայր Սըշովին ,
Ժողովեցան ի միասին :

Այլ չար հրաման արար կրկին ,
Զինչ որ գրեանք կար վիսղերին ,
Զործաթապատ աւետարանին ,
Զանգին գրեանք Հայոց ազգին :

Հանին ի դուռն վիսղերին ,
Եւ փայտի պէս կոտորեցին ,
Այն անօթն պիղծ Օլախին ,
Զամէն գրեանքն այրեցին :

Շտեֆոն պարոնն ի վիսղերն էր ,
Ի բարձր տեղիք նստեալ էր ,
ԶՀայոց օրէնքն բամբասէր ,
Վերուստ հայէր եւ ծիծաղէր :

Սշով քաղբի զեկեղեցին ,
Եւ զվանքերն Հայոց ազգին ,
Զորս այրեցին եւ աւերեցին ,
Մինչեւ ի հիմն հասուցին :

Զամէն զանգակն և պատկերն ,
Տարան իւրեանց եկեղեցին ,
Ասին արժան չէ՛ այս Հային ,
Իոքա վայել են մեր ազգին :

Յետոյ հրաման եհան կրկին ,
Ացաց բերէ՛ք զՀայ երէցին ,
Զվոյթ⁴ տանուտէրն և զպերկերն⁵ ,
Զկանայք եւ աղջկունքն ի միասին :

Բազում արմաշներ սփռուեցան ,
Քանքին տներն եւ մօրստան⁶ ,
ԶՀայոց ազգն զորս որ գտան ,
Թէ՛ քահանայ թէ՛ աշխարհական :

Զոմանք փոսէն ի դուրս հանին ,
Շատք ի մօրէն գտան բերին ,
Կանայք բազումք եւ աղջկանին ,
Նորահարսներ եւ երիցանկին :

Զոմանց զձեռն կապեցին ,
Եւ շատք մազէն ի քարչ բերին ,
Բերին ի դուռն վիսղերին ,
Անտանելի չարչարեցին :

Կ. Յ. ՊԱՍՏԱՃԵԱՆ

(Շարունակել է)

¹ Զորով կամ ճորով, հազիւ : ² Անտառ : ³ Ներք-
նստուն, նկւղ, (մաղաղա) : ⁴ Հոգաբարձու ազգին :
⁵ Հրամանակատար հոգաբարձուաց : ⁶ Անտառք :

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ս Է Օ Լ Է Օ Չ

Սէօլէօզ (Պրուսայի դաւառ) լեռներէ, անտառներէ եւ մացառներէ չըջալատեալ, սեպ եւ զառիվայր գիրք մ'ունի: Հողն արգասարեր, բայց ժողովուրդի բանակութեան հետ բազդատելով բիշ: մշակելու յարմար միայն քիչ մը դաշտային հող ունի, ուր կը գտնուին գիւղացիին այգեստանը, ձիթեստանը, պարտէզներն ու արտերն, որք Նիկիական լճին եւ գիւղին միջոցն են: Գիւղը յիշեալ լճին արեւմտեան հարաւային կողմն լյնալով, անկէ գրեթէ երեք քառորդ ժամ հեռաւորութիւն ունի: Օդը քիչ մը խոնաւ, ջուրերը զով եւ մաքուր են:

Ամբողջ գիւղը գրեթէ 700-720 զուտ հայ տուններէ կը բաղկանայ, որոց տասնի չափը բողբոջական են, իսկ մնացեալները լուսաւորչական: Բոլոր ժողովուրդին նիւթական ապրուստի միակ միջոցն է կրնամ ըսել անկանոն հողագործութիւն մը, այն ալ ինչպէս վերն ըսի, փոքրիկ դաշտավայրի մը մէջ, եւ կամ անտառներէ մէջ բացուած մի քանի կտոր արտերի վրայ:

Արհեստաւորներ խիստ քիչ կը գտնուին, եւ ասոնց ալ շատն իրենց արհեստին մէջ ոչ բոլորովին կատարեալ: Ընթերցողն ասկէ կրնայ հետեւեցնել թէ, հոս ժողովուրդի մեծամասնութիւնը կը պատկանի այն դասին, որն որ խիստ դժուար կերպով կրնայ հայթայթել իւր ամէնօրեայ նիւթական պէտքեր: Միջակ դասէն ի դատ, կան նաեւ քանի մը տուն հարուստներ, բայց ոչ քաղաքաբնակ հարուստին չափ հարուստ:

Գալով գիւղիս եւ կրթական գործին, բարոյապէս շատ գոհացուցիչ է հոս ժողովուրդի ընթացքը, բայց բաղադրակրթական բարեկիրթ սովորութիւններ չափ ետ մնացած են, և մինչեւ ցայսօր կը գործածուին այնպիսի սովորութիւններ, որք ըստ մեծի մասին հին եւ անվայել դրութիւն մ'ունին կրնայ ըսուիլ: Ուսումի յարգն եւ դպրոցի

նուիրականութիւնը տակաւ առ տակաւ ճանչցուիլ սկսեալ է: Ամեն կիրակի, եկեղեցիի աւարտումէն յետոյ, խումբ խումբ կ'իններ՝ մանկավարդ եւ ծեր ի միասին՝ աղջկանց դպրոցը կը դիմեն, ուր օգտակար խրատներ եւ պատմութիւններ լսելով մեծ հաճոյք կը վայելեն: Երկու ընկերութիւն հաստատուած է, մին «Կիրակնօրեայ ընթերցասիրաց», որը կիրակի օրեր դպրոց կ'երթան իրենց ժամանակն ընթերցանութեամբ անցունելու համար: Իսկ միւսը «Ուսումնասիրաց» անուն, որ գիւղին լուսամիտ երիտասարդներէն կը բաղկանայ, և ըստ իւր ընկերական կանոնագրի՝ կէտ նըպատակի ունի ավակցիլ դպրոցական մեծ եւ նուիրական գործին:

Արդէն գիւղիս Ս. Հրեշտակապետ եկեղեցիի պարսպին մէջ, մին՝ արտական սեռին եւ միւսն իգականին յատուկ երկու գեղեցկաշէն դպրոցներ կան, ուր կը յաճախեն 300 ի չափ մանչ եւ 200 ի չափ աղջիկ աշակերտներ, եւ որոնց մէջ պաշտօն կը վարեն վեց վարժապետ եւ հինգ վարժուհիներ, ընդ ամենը տասն և մէկ դասատու պաշտօնեայ: Ունինք նաեւ անտես մը: Ասոնց բոլորին ալ տարեկան վարձքերն եկեղեցական կալուածներէն կը հոգացուին, և որոց համար տարին գրեթէ 16 հազար դահեկան կը ծախսուի: Արու աշակերտներն առ այժմ կ'ուսանին աղայիս եւ սրբազան պատմութիւններ, հայկաբանութիւն, քաղաքական աշխարհագրութիւն, թուաբանութիւն և սկզբունք թրքերէն լեզուի: Իսկ աշակերտուհիները միայն Սրբազան պատմութիւն եւ հայկաբանութիւն: Այս օրերս թէ եւ դպրոցական հրապարակային ըննութիւն մը տեղի պիտի ունենար, բայց ինչ ինչ պատճառներով հիմակուհիմա յետաձգուած է: Երկու դպրոցներին ալ վիճակը թէ եւ քիչ շատ գոհացուցիչ կը թուի, բայց և այնպէս տեսնուչ-հոգաբարձութիւնը քանի մ'օրէ ի վեր դպրոցական վիճակներէն սաւառ ինչ դժգոհութիւն կը ցուցնէ, եւ իւր պաշտօնին մէջ ալ վճատութիւն: սակայն և այնպէս յուսալի է որ այդ պատ. Հոգաբարձութիւնը կրկին կ'օգեւորի և կը գործէ անվատ ի յառաջադիմութիւն ազգային գործին:

Կայ նաեւ ըստ սահմանադրական օրինաց կարգեալ Թաղական Խորհուրդ մը, որ իւր եռամեայ պաշտօնավարութիւնն ազգօգուտ պորձերով բեղմնաւորած է, ուստի եւ համայն ժողովրդին համակրութիւնը կը վայելէ :

Մ. Ա. ԿԵՕԶԻԻՄԵԱՆ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՍՈՒՋԱՐԿԵԱՆ ԽՆԴԻՐՔ

ԹԻԻ 24.	(Մասիս Թիւ 3814)
» 36.	» » 3828)
» 37.	» » 3831)
» 38.	» » 3832)
» 39.	» » 3832)

ԽՆԴԻՐ

ԹԻԻ 40.

Դիտենք երկու ուղղանկիւն գծեր Օ Ա եւ Օ Բ (պատկերը շինել)։ Օ Ա-ի վրայ տանենք անփոփոխ կէտ մը Կ։ սոյն Կ կէտէն գծենք միջահատ (Թռանդվեռասալ) շարժուն գիծ մը Կ Կ՝ որ Օ Ա եւ Օ Բ գծերուն հետ կաղմէ Կ Օ Կ՝ ուղղանկիւն եռանկիւն։ Դիտենք այժմ ներգծեալ շրջանակն։ Գ ըլլայ իւր հպման կէտն Օ Բ-ի հետ եւ Դ ուր կը հպի Կ Կ՝։ Ապացուցանել թէ Գ Դ գիծն հաստատուն կէտէ մը կ'անցնի։

ԽՆԴԻՐ ԹԻԻ 35

ԼՈՒԾՈՒՄՆ

Մ Դ ըլլայ երկու շրջանակաց միանգամայն շօշափողն։ Դ լինելով Օ-ի հպման կէտը (պատկերը շինել)։ Գծենք Մ Օ՝, Դ Օ եւ միացնենք Մ կէտը Կ-ի որ է Օ Օ՝ կեդրոնաց գծին եւ Օ շրջանակին հատման կէտը։ Օ՝ Մ Օ եւ Օ՝ Օ Մ անկիւնները հաւասար են, նոյնպէս հաւասար են Օ՝ Մ Օ եւ Մ Օ Դ անկիւնը ըստ որում Օ Դ, Օ՝ Մ զուգահեռական են։ Մ Օ Կ եւ Մ Օ Դ եռանկիւնը հաւասար են ուրեմն եւ Մ Կ Օ անկիւնն ուղիւ ըլլալով Մ կէտը կը գտնուի Օ շրջանակին ի Կ շօշափող գծին վրայ։

Փոխադարձաբար Մ Կ-ի բոլոր կէտերն ալ խնդրուած հեռքին կը վերաբերին։ արդարեւ, Մ կէտէն գծենք Օ շրջանակին երկրորդ շօշափողն այսինքն Մ Դ, միացնենք Օ կէտը Դ-ի եւ Մ կէտէն գծենք Օ Դ-ի զուգահեռականն որ կը կտրէ զՕ Կ ի Օ՝։ Գծենք Մ Օ որ Դ Օ Կ-ի երկատիչն է։ Օ Մ Օ՝ եւ Դ Օ Մ անկիւնը հաւասար են, ուրեմն Օ Մ Օ՝ = Մ Օ Օ՝։ հետեւաբար Օ՝ Օ = Օ՝ Մ եւ Օ կեդրոն եւ Օ Օ՝ շառաւիղ ունեցող շրջանակն, կը շօշափէ զԱ Բ ի Օ, եւ զՄ Դ ի Մ։

Մ կէտին հեռքն կը բաղկանայ ուրեմն Ա Բ-ի զուգահեռական երկու շօշափողներէ։

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ՍՈՒՐ ՀԱՆ ԴԱԿ

8 Օգոստոս 1886

Ազգային լուրեր եթէ կան ալ, գոնէ հրապարակի վրայ կը պակսին։ Խառն ժողովն այս երկուշաբթի յարտասովոր նիստ գումարուեցաւ, սակայն խորհրդակցութեանց առարկայ եղող խնդիրը եւ տրուած որոշմունք ծածուկ պահուեցան։ Ս. Պատրիարք Հայրը նոյն օր, յաւարտ ժողովոյն, Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Դատական նախարար Ճէվտէզ փաշայի հետ։ Կ'ըսուի թէ Վանայ եւ Մշոյ վերաբերեալ ամենակարեւոր խնդիրներ կան Վարչութեան սեղանին վրայ։

Ազգային ժողովոյ վերջին նիստն, որուն վրայ խօսելու առիթ չ'ունեցանք, չ'եղաւ այնքան արդիւնաւոր։ Ատենադրութեանց վաւերացման առթիւ ծագած միջադէպէ մը յետոյ, որուն հիմը կը կազմէր Ներքին Կանոնադրի՝ Սահմանադրութեան հետ հատեցումն, եւ առաջնոյն ինչ ինչ յօդուածոց դադարման հարկն եւ վերջնոյն վերաբնութեան սկզբունքն, ժողովն ընդունեց 1886-87 եւ 87-88 տարեշրջաններու համար ներկայացեալ ելմացոյցի Հասոյթից

գլուխը : Ծախուց մասի վիճաբանութիւնը թողուեցաւ յաջորդ նստին :

Պիէճիկի առաջնորդ Ղեւոնդ Եպիսկոպոս Շիշմանեան, որ քանիցս կոչուած էր Ազգային Վարչութեան կողմէ, Կ. Պոլիս եկաւ անցեալ շաբթու եւ կը վերադառնայ ի մօտոյ իւր պաշտօնատեղին, վասն զի նորա հրաւիրման տօնի մասով խնդիրը փակուեցաւ իւր արդիւնք թիւրիմացութեան (°) Նոյնպէս մայրաքաղաքս եկած է Երզնկայի առաջնորդ Փիլիպպոս Եպիսկոպոս Նաճառեան որ վերջնապէս հրաժարական տուած է այդ պաշտօնէն : Ս. Պատրիարք Հայրն առաջարկած է Ն. Գերապատուութեան առ այժմ Նառլը Գաբուի եկեղեցւոյն բարոջութիւնն ստանձնել :

Ս. Պատրիարքը Թագրիբ գրեւով ի Բ. Գոռն, Պաղճեան Բարդուղիմէոս վարդապետին Բաղէշի առաջնորդական տեղապահի պաշտօնին վաւերացումը խնդրեց, ըստ որում հեռագիր մը կը ծանուցանէր թէ յիշեալ վարդապետը Ձմէկածապէն ճանրայ ելեր է իւր նոր պաշտօնատեղին ուղեւորելու համար : Կենթապրուի ուրեմն թէ Կէօմրիքճեան վարդապետ եւս Բաղէշէն կամ մեկնած է եւ կամ մեկնելու վրայ :

Գոհութեամբ յիշել արժան է երրորդ կարգի Մէճիաիէ պատուանշանն որ կայս. կառավարութեան կողմէ տրուեցաւ Երուսաղէմի Պատրիարքական Տեղապահ Երեմիա Եպիսկոպոսին, ի վարձատրութիւն Ն. Գերապատուութեան բազմախատ եւ բարեօրժառայութեանց, ըստ առաջարկութեան Ա. մեն. Ս. Պատրիարքի :

Սեբաստիոյ չրջակայ գիւղերէն Կ. Պոլիս գտնուող ազգայինը այս օրերս հանրագիր մը մատուցին ի Պատրիարքարան գանգատելով թէ Սեբաստիոյ Ս. առաջնորդը չ'այցելէր իրենց գիւղօրայքն որք անխնամ թողուած են : Այս հանրագիր զրկուեցաւ Գեր. Պետրոս Եպիսկոպոսին, Նորա ուշադրութիւնն հրաւիրելով :

Երէկ, Վիէննայէն առնուած հեռագրէ մը տեղեկացանք թէ հանգուցեալ Գեր. Վարդան Ըստիարեանի տեղ, Վիէննայի Միթրեան միաբանութեան արքահայր ընտրուեր է Վերապատուելի Հայր Արսէն վարդապետ Այաքնեան, բազմածանօթ եւ հմուտ եկեղեցականն :

Տ. Ա.

ԱԶԴԻՔ ԿԵՂ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Կեղ. Վարժարանի խնամակալութեան կողմէ հետեւեալն հաղորդուած է մեզ ի հրատարակութիւն.

Ազգային Կեղ-րոնական Վարժարանի խնամակալութեանս նախորդ յայտարարութեանն համեմատ, վարժարանին աշակերտելու համար արձանագրուած ուսանողաց քննութիւնը տեղի ունեցաւ օգոստոս Կին. Աշակերտաց մեծագոյն մասը քննուեցաւ բոլոր ճիւղերուն մէջ. այլ ոմանք, օրը տարաժամած լինելուն պատճառաւ, չը կրցան քննութիւն տալ մի քանի ուսմանց համար, մինչ այլք ալ առաջին անգամ նոյն օրը ներկայացան յարձանագրութիւն : Այսպիսեաց դիւրութիւն մ'ընծայելու նպատակաւ, խնամակալութիւնըս պատիւ ունի ծանուցանել թէ որոշած է քննութեան ընդունիլ զանոնք յառաջիկայ երկուշաբթի օգոստոս 11 առաւօտեան ժամը 2 1/2 ին, ի ներկայութեան միւսնոյն Մասնախմբին :

Կեղ-րոնական Վարժարանի խնամակալութեան կողմէ հետեւեալն հաղորդուած է մեզ ի հրատարակութիւն.

Ազգային Կեղ. Վարժարանի խնամակալութիւնս, նկատելով որ գաւառներէն հասած նամակներ կ'իմացնեն թէ վարժարանին աշակերտելու փափաքող պատանիներ ճամբայ պիտի ելնեն մայրաքաղաքս գալու համար, պատիւ ունի ծանուցանել թէ այսպիսեաց դիւրութիւն մ'ընծայելու համար որոշած է արձանագրութեան տօմարը բաց պահել մինչեւ սեպտեմբերի վերջ : Այսպիսիք պիտի կարենան քննութեան ներկայանալ մինչեւ նոյն թուականն, և եթէ ընդունուին, հոկտ. 1 էն սկսեալ հետեւիլ վարժարանին դասախօսութեանց, որք ինչպէս յայտնի է, պիտի սկսին սեպտ. 1 ի երկուշաբթի առաւօտ :

Արտօնատէր Կ. Ս. Իիթիիճեւն
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԻՐԱԳՐՈՅ